

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2009թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՏԵԽՆԱԾԻՆ, ՏԱՐԵՐԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ
ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ


ԵՐԵՎԱՆ 2009թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2009Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ
ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում առաջացել է 1474 արտակարգ դեպք (այսուհետ՝ ԱԴ) (2008թ.՝ 1861, 2007թ.՝ 1416):

Գրանցվել են **779 տեխնածին** (2008թ.՝ 1123 (ԱԴ-ների 60.3%-ը), 2007թ.՝ 709 (ԱԴ-ների 50.1%-ը)), **70՝ տարերային** (2008թ.՝ 81 (ԱԴ-ների 4.4%-ը), 2007թ.՝ 58 (ԱԴ-ների 4.1%-ը)) և **625՝ սոցիալ-կենցաղային** բնույթի ԱԴ (2008թ.՝ 657 (ԱԴ-ների 35.3%-ը), 2007թ.՝ 649 (ԱԴ-ների 45.8%-ը)):

2007թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ԱԴ-ների թվաքանակն աճել է 58 դեպքով (3.9%-ով), իսկ 2008թ. համեմատությամբ՝ նվազել 388 դեպքով (20.9%-ով):

2009թ. առաջին եռամսյակում ԱԴ-ների բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված է նկար 1-ում:



Նկար 1.

Թեև 2009թ. 2008թ. համեմատությամբ գրանցվեց նվազում բոլոր մասնաբաժիններում. տեխնածին ԱԴ-ները նվազեցին 344-ով (մոտ 30.6%-ով), տարերային ԱԴ-ները՝ 11-ով (13.6%-ով), իսկ սոցիալ-կենցաղային ԱԴ-ները՝ 26-ով (4.1%-ով), 2007թ. համեմատությամբ ցուցանիշների նվազումով աչքի ընկան միայն սոցիալ-կենցաղային ԱԴ-ները (24-ով, մոտ 3.7%-ով). տեխնածին ԱԴ-ների թիվն աճեց 70-ով (7.9%-ով), իսկ տարերային ԱԴ-ների՝ 12-ով (20.7%-ով):


Արտակարգ դեպքերի հետևանքով տարվա առաջին եռամսյակում զոհվել է 98 (2008թ.՝ 103, 2007թ.՝ 99), տուժել՝ 1159 մարդ (2008թ.՝ 1420, 2007թ.՝ 1312): Ընդ որում՝ զոհերի և տուժածների թվաքանակի նվազում գրանցվեց և՛ 2007, և՛ 2008թ. համեմատությամբ (համապատասխանաբար 1-ով (մոտ 1%-ով) և 5-ով (մոտ 4.8%-ով)՝ զոհերի, 153-ով (մոտ 11.7%-ով) և 261-ով (մոտ 18.4%-ով)՝ տուժածների մասնաբաժիններում):

Ինչպես և նախորդ տարիներին, զոհերի մասնաբաժնում գերակշիռ մեծամասնությունը բաժին ընկավ տեխնածին արտակարգ դեպքերին (73 դեպք, ԱԴ-ներից զոհվածների մոտ 74.5%-ը, 2008թ.՝ 79 զոհ, ԱԴ-ներից զոհերի մոտ 76.7%-ը):

Թեև 2008թ. առաջին եռամսյակի համեմատությամբ սոցիալ-կենցաղային ԱԴ-ների մասնաբաժնում գրանցվեց զոհերի թվաքանակի աճ (2 դեպքով, 8.7%-ով), 2007թ. համեմատությամբ ցուցանիշները նվազեցին 10-ով (28.6%-ով):

Ձոհերի մասնաբաժնում առավելագույն ցուցանիշներ գրանցվեցին ճանապարհատրանսպորտային պատահարների (65 դեպք, ԱԴ-ներից զոհերի մոտ 66.3%-ը, 2008թ.՝ 62, 60.2%-ը), իսկ տուժածների՝ թունավորումների դասում (622, ԱԴ-ներից տուժածների 27.8%-ը, 2008թ.՝ 803 դեպք, 56.5%-ը): Ընդհանուր առմամբ՝ վերոհիշյալ դասերում ցուցանիշների աճով էլ հիմնականում պայմանավորվում է ԱԴ-ներից զոհերի և տուժածների վիճակագրական պատկերն ըստ տարիների:

2009թ. զոհվածների և տուժածների հարաբերությունն ըստ ԱԴ-ների պատկերված է նկար 2-ում:




Նկար 2.

2009թ. հաշվետու ժամանակահատվածում դեպքերի ընդհանուր վիճակագրությունում բաշխվածության պատկերն էական փոփոխություն չկրեց՝ պահպանելով վերջին տարիներին ձևավորված սկզբունքը: Ինչպես և ակնկալվում էր՝ ԱԴ-ների գերակշռող մասը՝ 1370 դեպք (ԱԴ-ների 92.9%-ը) բաժին ընկավ հրդեհներին, ճանապարհատրանսպորտային պատահարներին (այսուհետ ճՏՊ) և թունավորումներին (2008թ.՝ 1747, 93.8%-ը, 2007թ.՝ 1324 դեպք, 93.5%-ը): Փոփոխություն գրանցվեց միայն նշված մասնաբաժինների տոկոսային բաշխվածությունում, ուր հրդեհները «զիջեցին» առաջատարի տեղը (մասնաբաժնում նվազում մոտ 13%-ով) թունավորումներին (մասնաբաժնում աճ մոտ 5.9%-ով)՝ ետ մնալով նաև ճՏՊ-ներից:

Մնացած դասերում մասնաբաժնային բաշխվածությունում կտրուկ փոփոխություններ չգրանցվեցին. աճով հանդես եկան երկրաշարժերի մասնաբաժինը՝ հասցնելով իր ցուցանիշը 1.3%-ից 2.9-ի, ուժեղ քամիները (0.9%-ից 1.2-ի) և դիակի հայտնաբերման դեպքերը (0.6%-ից 1.2-ի): Ընդհանուր առմամբ, հանրապետությունում տարերային գործոններով պայմանավորված ԱԴ-ներն աչքի ընկան իրենց սակավությամբ. գրոյական ցուցանիշ գրանցվեց սելավների, քարաթափումների, փլվածքների, կարկուտի, տեղա-

տարափ անձրևի, կայծակահարման և վաղ վեգետացիոն շրջանում ցրտահարության մասնաբաժիններում:

2009թ. առաջին եռամսյակում առաջացած ԱԴ-ների բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված է նկար 3-ում, 2007-2009թթ. առաջին եռամսյակի համեմատական տվյալները՝ աղյուսակ 1-ում:



Նկար 3.

Աղյուսակ 1.

Դ/հ	ԱԴ անվանումը	2009			2008			2007		
		ԱԴ քանակը	Ձոռ.	Վիրավ.	ԱԴ քանակը	Ձոռ.	Վիրավ.	ԱԴ քանակը	Ձոռ.	Վիրավ.
ՏԵԽՆԱԾԻՆ ԱԴ										
1	Հրդեհներ	380	7	3	729	14	24	369	14	13
2	Պայթյուններ	4	1	6	9	3	5	9	1	6
3	Փլուզումներ	7	0	0	5	0	0	2	1	2
4	ԵՏՊ*	388	65	513	380	62	564	329	48	475
ԸՆԴԱՄԵՆԸ		779	73	522	1123	79	593	709	64	496
ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱԴ										
5	Ջրհեղեղ	1	0	0	11	0	0	3	0	0
6	Սելավ	0	0	0	0	0	0	0	0	0
7	Քարաթափում	0	0	0	0	0	0	0	0	0
8	Փլվածք	0	0	0	4	1	5	0	0	0
9	Սողանք	2	0	0	1	0	0	0	0	0
10	Ուժեղ քամի	18	0	0	17	0	0	5	0	0
11	Չնաբուք	6	0	0	23	0	0	8	0	0
12	Տեղատարափ անձրև	0	0	0	0	0	0	0	0	0
13	Ցրտահարություն	0	0	0	0	0	0	0	0	0
14	Կայծակահարում	0	0	0	0	0	0	0	0	0
15	Ուժեղ կարկուտ	0	0	0	1	0	0	0	0	0
16	Երկրաշարժ	43	0	0	24	0	0	42	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		70	0	0	81	1	5	58	0	0
ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱԴ										
17	Թունավորումներ	602	6	622	638	11	803	626	16	799
18	Դիակի հայտնաբերում	18	18	*	12	12	*	19	19	*

19	Զրահեղձում	1	1	0	0	0	0	0	0	0
20	Պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգ	2	0	0	0	0	0	2	0	0
21	Զենք, զինամթերքի հայտնաբերում	0	0	0	0	0	0	1	0	0
22	Համաճարակներ	2	0	15	7	0	19	1	0	17
ԸՆԴԱՄԵՆԸ		625	25	637	657	23	822	649	35	816
ԸՆԴԱՄԵՆԸ		1474	98	1159	1861	103	1420	1416	99	1312


ՃՏՊ-ների թվաքանակում ներառված է 2 պատահար ե/գ ուղիներին (0 զոհ, 0 վիրավոր)

Տեխնածին արտակարգ դեպքեր


Հայստանի Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում գրանցվել է 779 տեխնածին ԱԴ, ինչի հետևանքներից զոհվել է 73 (ԱԴ-ներից զոհվածների 74.5%-ը), տուժել՝ 522 մարդ (ԱԴ-ներից տուժածների մոտ 45%-ը):

2007թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ տեխնածին ԱԴ-ներն աճել են 70 դեպքով (9.9%-ով) և նվազել 2008թ. համեմատությամբ՝ 344 դեպքով (30.6%-ով): Ընդ որում՝ նվազման հիմնական պատճառն էր՝ հրդեհների կտրուկ նվազումը: 2008թ. համեմատությամբ զգալի նվազում գրանցվեց հրդեհների (349-ով, մոտ 1.9 անգամ) և պայթյունների (5-ով, մոտ 2.2 անգամ) դասերում: Աննշան աճ (2 և 8 դեպք) գրանցվեց փլուզումների և ՃՏՊ-ների դասերում:

2007-2009թթ. տեխնածին ԱԴ-ների համեմատական դիագրամը բերված է նկար 4-ում, բաշխվածությունն ըստ բնույթի նկար 5-ում, 2007-2009թթ. առաջին եռամսյակի համեմատական տվյալները աղյուսակ 2-ում:



Նկար 4.



Աղյուսակ 2

Հ/հ	Արձանանունը	2009			2008			2007		
		Արձանակը	Ձոհ.	Տուժ.	Արձանակը	Ձոհ.	Տուժ.	Արձանակը	Ձոհ.	Տուժ.
1	Հրդեհներ	380	7	3	729	14	24	369	14	13
2	Պայթյուններ	4	1	6	9	3	5	9	1	6
3	Փլուզումներ	7	0	0	5	0	0	2	1	2
4	ԵՏՊ*	388	65	513	380	62	564	329	48	475
ԸՆԴԱՍԵՆԸ		779	73	522	1123	79	593	709	64	496

*ԵՏՊ-ների թվաքանակում ներառված է 2 պատահար ե/զ ուղիներին (0 զոհ, 0 տուժած) **Հրդեհներ:** 2009թ. առաջին եռամսյակում գրանցվել է հրդեհների առաջացման վերաբերյալ 437 ահազանգ (2008թ.՝ 815, 2007թ.՝ 434), որոնցից հրդեհ է գրանցվել 380 (2008թ.՝ 729, 2007թ.՝ 369), իսկ նյութական վնաս պատճառվել՝ 204 դեպքում: Ահազանգերից 17-ը եղել են կեղծ (2008թ.՝ 27, 2007թ.՝ 29): 33 դեպքում առաջացել է հրդեհի ծագման սպառնալիք (2008թ.՝ 46, 2007թ.՝ 31), որոնցից 19-ում՝ ծագման պատճառ են հանդիսացել էլ. հանգույցներում վթարային ռեժիմները (2008թ.՝ 27, 2007թ.՝ 20):

Հաշվետու ժամանակահատվածում հրդեհների հետևանքով զոհվել է 7, (2008թ.՝ 14, 2007թ.՝ 14), տուժել՝ 3 մարդ (2008թ.՝ 24, 2007թ.՝ 13):

Հրդեհներից պատճառվել է շուրջ 43 մլն դրամի վնաս, որը 2008թ. ցուցանիշի համեմատությամբ նվազել է շուրջ 69 մլն դրամով (մոտ 2.6 անգամ. 2008թ.՝ 112, 2007թ.՝ 106.610 մլն դրամ):

2008թ. հաշվետու ժամանակահատվածի համեմատությամբ հրդեհների զգալի նվազում գրանցվեց գրեթե բոլոր մասնաբաժիններում, բացառությամբ **առողջապահական նշանակության օբյեկտների և ուսումնական հաստատությունների** մասնաբաժիններում, ուր ցուցանիշները մնացին անփոփոխ:

2007-2009թթ. առաջին եռամսյակում հրդեհների առաջացման վերաբերյալ ահազանգերի բաշխվածությունն ըստ բնույթի բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.


Հ/հ	Հրդեհի ծագման օջախը	2009	2008	2007
1	Բնակելի շենքերում	23	52	47
2	Սեփական տներում, տնամերձ կառույցներում	64	134	82
3	Հիմնարկներ, կազմակերպություններում	8	12	7
4	Ուսումնական հաստատություններում	5	5	3
5	Արդյունաբերական օբյեկտներում	6	17	9
6	Տրանսպորտային միջոցների	29	75	31
7	Կրպակներում, ավտոտնակներում, տնակներում	46	60	36
8	Էներգամատակարարման օբյեկտներում	20	31	16
9	Առևտրի, հասարակական սննդի, սպասարկման, ժամանցի օբյեկտներում	18	16	20
10	Բուսածածկ տարածքներում, պահեստավորված անասնակերի	86	212	47

11	Աղբ, աղբատարերում	64	93	69
12	Գյուղատնտեսական նշանակության օբյեկտներում	10	19	0
13	Առողջապահական օբյեկտներում	1	1	2
14	Մշակույթի և սպորտի օբյեկտներում	0	2	0
15	Հսկվող կրակ	7	13	5
16	Այլ դեպքեր	33	46	31
17	Կեղծ զանգեր	17	27	29
ԸՆդամները		437	815	434

Այսպիսով, հրդեհների մոտ 20%-ը ծագել է բնակելի շինություններում (2008թ.՝ 22.8%-ը, 2007թ.՝ 29.7%-ը), որից 14.6%-ը առանձնատներում, տնամերձ կառույցներում (2008թ.՝ 16.4%-ը): Շուրջ 20%-ը բաժին ընկավ բուսածածկույթներին և պահեստավորված անասնակերին (2008թ.՝ 26%-ը, 2007թ.՝ 10.8%-ը): Առաջին եռամսյակում հանրապետության անտառներում գրանցվել հրդեհների բռնկման 1 դեպք (Լոռու մարզում): Այրվել և շարքից դուրս է եկել մոտ 92 տոննա պահեստավորված անասնակեր, ինչը մոտ 6.5 և 2.3 անգամ նվազել է 2008 և 2007թթ. գրանցված ցուցանիշներից (2008թ.՝ 597, 2007թ.՝ 211, 2006թ.՝ 237տոննա): Կեղծ ահազանգերն ու հսկվող կրակները հրդեհների ընդհանուր թվում կազմեցին մոտ 5.5%-ը (2008թ.՝ 4.9%, 2007թ.՝ 7.9%):

Գրանցվել է հրդեհի ծագման սպառնալիքի, էլ. հանգույցներում վթարային ռեժիմների, ծխապատ գոտիների առաջացման 19 դեպք (2008թ.՝ 27, 2007թ.՝ 31):

2009թ. առաջին եռամսյակում հրդեհների բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված է նկար 6-ում:




Նկար 6.


Հաշվետու ժամանակահատվածում հրդեհների մեծամասնությունը գրանցվեց Երևանում (156 դեպք, մոտ 41%-ը): Թեև մայրաքաղաքում հրդեհների թիվը զգալի նվազեց, մասնաբաժնում գրանցվեց աճ մոտ 6%-ով, ինչը պայմանավորված էր Լոռու

մարզում դեպքերի (բնականաբար՝ մասնաբաժնի) կտրուկ նվազումով: 2008թ. համեմատությամբ 2009թ. առաջին եռամսյակում հրդեհների զգալի նվազում գրանցվեց բոլոր մարզերում, իսկ 2007թ. համեմատությամբ՝ նաև Գեղարքունիքի, Շիրակի մարզերում և մայրաքաղաքում: Այսպիսով, 2008թ. համեմատությամբ **Արագածոտնում** ցուցանիշները նվազեցին 2.9 անգամ (19 դեպքով), **Արարատում**՝ մոտ 1.2 անգամ (7 դեպքով), **Արմավիրում**՝ 1.4 անգամ (10 դեպքով), **Գեղարքունիքում**՝ 2.1 անգամ (18 դեպքով), **Լոռիում**՝ 3.4 անգամ (97 դեպքով), **Կոտայքում**՝ մոտ 1.5 անգամ (13 դեպքով), **Շիրակում**՝ 3 անգամ (28 դեպքով), **Սյունիքում**՝ մոտ 2.5 անգամ (30 դեպքով), **Վայոց ձորում**՝ մոտ 3.4 անգամ (18 դեպքով), **Տավուշում**՝ մոտ 1.3 անգամ (13 դեպքով) և **Երևանում**՝ 1.6 անգամ (98 դեպքով):

2009թ. առաջին եռամսյակում հրդեհների բաշխվածությունն ըստ մարզերի բերված է նկար 7-ում, 2007-2009թթ. համեմատական տվյալները՝ նկար 8-ում:



Նկար 7.



Նկար 8.


2009թ. առաջին եռամսյակում հրդեհներից այրվել է մոտ 364 200 ք.մ. մակերես (2008թ.՝ 2 350 000 ք.մ., 2007թ.՝ 92 000 մ.ք.):

Ահազանգերի արձագանքման նպատակով իրականացվել է 539 հրշեջփրկարարական մեքենայի ելք (2008թ.՝ 1044, 2007թ.՝ 595): Հրդեհների 50 դեպքում


մարման աշխատանքներն իրականացվել են բնակչության ուժերով՝ մինչ հրշեջների ժամանումը (2008թ.՝ 51, 2007թ.՝ 54): Գրանցվել է հրդեհների ինքնամարման 1 դեպք:

Ճանապարհատրանսպորտային պատահարներ: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է 388 պատահար (2008թ.՝ 380, 2007թ.՝ 329): ԳՏՊ-ների հետևանքով զոհվել է 65 (2008թ.՝ 62, 2007թ.՝ 48), տուժել՝ 513 մարդ (2008թ.՝ 553, 2007թ.՝ 475 մարդ): Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներին գրանցվել է 386 դեպք: Թեև 2008թ. համեմատությամբ գրանցվեց դեպքերի (8-ով) և զոհերի (3-ով) աճ, տուժածների թվաքանակը նվազեց 40-ով, ինչը 2003-2008թթ. ԳՏՊ-ների վիճակագրությունում հանդիսացավ միակ նվազման ցուցանիշը:

2007-2009թթ. ԳՏՊ-ների բաշխվածությունն ըստ ամիսների պատկերված է նկար 9-ում, ԳՏՊ-ների, զոհերի և տուժածների համեմատական դիագրամն ըստ տարիների՝ նկար 10-ում:



Նկար 9.



Նկար 10.

Գրանցվել է երկու պատահար հանրապետության երկաթգծի ուղիներին (երկուսն էլ Լոռու մարզում), ինչից զոհեր և տուժածներ չեն գրանցվել. մարտի 2-ին Լոռու մարզում՝ Ալավերդի քաղաքի ե/գ կայարանի թիվ 2608 պիկետում, ուղեգծից դուրս են եկել մետաղի ջարդոնով բեռնված երեք վագոններ, իսկ մարտի 17-ին՝ Կոտայքի մարզում՝ Հրազդան-Սուլակ ե/գ հատվածում շրջվել են ոսկու հունքով բեռնված 7 վագոն:

Փլուզումներ: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է փլուզման 7 դեպք, որից 2-ը՝ շենքերում, 5-ը՝ սեփական տներում (տնամերձ կառույցներում): Փլուզումներից զոհեր և տուժածներ չեն գրանցվել:

Փլուզումների 1-ական դեպք գրանցվեց Արարատի (փլուզվել է օժանդակ շինություն), Կոտայքի (փլուզվել է սեփական տան տանիքի հեմապատը), Շիրակի (փլուզվել է բնակարանի առաստաղը) և Սյունիքի (սողանքի հետևանքով փլուզվել է ցանկապատը) մարզերում, 3՝ մայրաքաղաքում (որից 2-ը՝ սեփական տներում):

Պայթյուններ: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետության տարածքում գրանցվել է պայթյունի 4 դեպք (2006-2008թթ.՝ 9-ական դեպք), ինչի հետևանքով զոհվել է 1, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացել 6 մարդ:

Պայթյունների առաջացման աղբյուր են հանդիսացել գազի բալոնները, այդ թվում՝

- Շիրակի մարզի Քարաբերդ գյուղում` բնակելի շինությունում բալոնից արտահոսած գազը, ինչից տուժել է 1 մարդ,
- Վայոց ձորի և Լոռու մարզերում գազալիցքավորման կայաններում տրանսպորտային միջոցներում տեղադրված բալոնները (տուժել է 4 մարդ (Վայոց ձոր), զոհվել է 1, տուժել` 1 մարդ (Լոռի)),
- մայրաքաղաքում` երթուղային տաքսիի գազի բալոնը, ինչց զոհեր և տուժածներ չեն գրանցվել:

Տարերային արտակարգ դեպքեր

2009թ. առաջին եռամսյակում գրանցվել է 70 տարերային արտակարգ դեպք: Եռամսյակում տարերային ԱԴ-ներից զոհեր և տուժածներ չեն գրանցվել:


Հաշվետու ժամանակահատվածում տարերային ԱԴ-ների թվում գրանցվեց աճի միտում` 2007թ. (12 դեպքով), նվազման` 2008թ. (11 դեպքով) համեմատությամբ: Ընդ որում` քանակական աճը մեծամասնությամբ պայմանավորվեց երկրաշարժի մասնաբաժնում գրանցված աճով: Ընդհանուր առմամբ, եռամսյակը հանդես եկավ մեղմ ցուցանիշներով, ինչը պայմանավորված էր օդերևութաբանական վտանգավոր երևույթների սակավությամբ. 2008թ. համեմատությամբ 10-ով նվազեցին ջրհեղեղների, 17-ով` ձնաբքերի թվաքանակը, իսկ սելավների, քարաթափումների, փլվածքների, տեղատարափ անձրևների, կարկուտների և ցրտահարության մասնաբաժիններում գրանցվեցին զրոական ցուցանիշնոր: Մեկական դեպքով աճ գրանցվեց ուժեղ քամիների և սողանքների մասնաբաժնում:

2007-2009թթ. 1-ին եռամսյակում տարերային ԱԴ-ների համեմատական տվյալները բերված են աղյուսակ 5-ում, բաշխվածությունն ըստ բնույթի` նկար 11-ում:

Աղյուսակ 5

Դ/հ	ԱԻ անվանումը	2009			2008			2007		
		ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավ.	ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավ.	ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավ.
1	Ջրհեղեղ	1	0	0	11	0	0	3	0	0
2	Սելավ	0	0	0	0	0	0	0	0	0
3	Քարաթափում	0	0	0	0	0	0	0	0	0
4	Փլվածք	0	0	0	4	1	5	0	0	0
5	Սողանք	2	0	0	1	0	0	0	0	0
6	Ուժեղ քամի	18	0	0	17	0	0	5	0	0
7	Չնարուք	6	0	0	23	0	0	8	0	0
8	Տեղատարափ անձրև	0	0	0	0	0	0	0	0	0
9	Ցրտահարում	0	0	0	0	0	0	0	0	0
10	Կայծակահարում	0	0	0	0	0	0	0	0	0
11	Ուժեղ կարկուտ	0	0	0	1	0	0	0	0	0

12	Երկրաշարժ	43	0	0	24	0	0	42	0	0
	ԸՆԴՈՍԵՆԸ	70	0	0	81	1	5	58	0	0



Սկար 11.

Երկրաշարժեր: 2009թ. առաջին եռամսյակում տարածաշրջանում գրանցվել է 43 երկրաշարժ: Հիմնականում դիտվել են 1-4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր, որոնց էպիկենտրոնները մեծամասնությամբ տեղաբաշխված են եղել հանրապետության հյուսիս-արևմտյան և հյուսիսային սահմանամերձ տարածքներում:

Ջրհեղեղներ: Հանրապետությունում գրանցվեց ջրհեղեղի 1 դեպք. մարտի 30-ին Գեղարքունիքի մարզի Նորակերտ գյուղական համայնքում արագ ձնհալի հետևանքով ջրածածկվել են մոտ 25 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ:

Սողանքներ: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է սողանքների ակտիվացման 2 դեպք. հունվարի 21-ին Սյունիքի մարզի Քարահունջ գյուղում (վնասվել է սեփական տան ցանկապատը և դարպասը) և մարտի 8-ին՝ մայրաքաղաքում (վնասվել են «Սարի Թաղ» թաղամասի 2-րդ շարքի թիվ 36 տան հիմքի տարրերը):

Ռժժեղ քամիներ: 2009թ. հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է ուժեղ քամիների 18 դեպք, որից 17-ը՝ մարտ ամսին:

Քամու ուժգնացում գրանցվեց մարտի 6-ից 10-ի ժամանակահատվածում (11 դեպք), ինչի հետևանքով Արարատի մարզում՝ Լուսաշող, Ջողի Բանավան, Լանջառ, Այնթափ, Բարձրաշեն գյուղական համայնքներում, Գեղարքունիքի մարզում՝ Մարտունի քաղաքային և Կուբ, Լիճք, Ազատ, Ներքին Գետաշեն, Ակունք գյուղական համայնքներում, Լոռու մարզի Սարամեջ գյուղական համայնքում, Կոտայքի մարզի Գառնի և Գեղադիր գյուղական համայնքներում, Սյունիքի մարզի Կապան քաղաքային և Ներքին Հանդ, Վերին Խոտանան, Եղվարդ, Կաղնուտ, Սևքար գյուղական համայնքներում, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքային և Ելփին, Խաչիկ, Մալիշկա գյուղական համայնքներում քշվեցին և վնասվեցին բազմաթիվ շինությունների տանիքներ, կոտրվեցին ապակիներ: Ռժժեղ քամի գրանցվեց ամսվա վերջին շաբաթում. մարտի 23-ին տանիքներ քշվեցին Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում (թիվ 4 միջնակարգ դպրոց), 24-ին՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում (2 սեփական տուն և տեխնոլոգիական քոլեջ), Երևանում (2 բնակելի շինություն), Շիրակի մարզի Արթիկ քաղաքային և Բայանդուր, Անուշավան, Նոր Կյանք, Հայրենյաց գյուղական համայնքներում (12 բնակելի շենք և 14 սեփական տուն),

իսկ մարտի 25-ին՝ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ և Փարպի գյուղական համայնքներում (15 սեփական տուն): Ուժեք քամի գրանցվեց մարտի 30-ին Վայոց ձորի մարզում. Մարտիրոս, Սերս և Գոմք գյուղական համայնքներում վնասվեցին բազմաթիվ սեփական տների և տնամերձ կառույցների տանիքներ:

Ձնաքույր: 2009թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է ձնաբքի, ձնահողմերի 6 դեպք. Արագածոտնի (Ալագյազ-Ծաղկահովիտ ա/ճ), Գեղարքունիքի (Սելիմի լեռնանցք և Գեղիովիտ-Մարտունի ա/ճ) և Սյունիքի (Գորիս-Երևան ա/ճ) մարզերում ձնաբքի հետևանքով արգելափակվեցին շուրջ 50 տրանսպորտային միջոց:

Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքեր

Հանրապետությունում 2009թ. առաջին եռամսյակում գրանցվել է 625 սոցիալ-կենցաղային ԱԴ-ներ (2008թ.՝ 658 2007թ.՝ 649), ինչի հետևանքով զոհվել է 25 (2008թ.՝ 23, 2007թ.՝ 35), տուժել՝ 637 մարդ (2008թ.՝ 822, 2007թ.՝ 816):


2007-2008թթ. համեմատությամբ սոցիալ-կենցաղային ԱԴ-ների թիվը նվազել է համապատասխանաբար 24 (3.7%-ով) և 33 (մոտ 5%-ով) դեպքով: Ջգալի նվազում գրանցվեց տուժածների մասնաբաժնում. 2007թ. համեմատությամբ տուժածների թվաքանակը նվազեց 179-ով (մոտ 20%-ով), 2008թ.՝ 185-ով (22%-ով):

2007-2009թթ. առաջին եռամսյակի տարերային ԱԴ-ների համեմատական տվյալները բերված են աղյուսակ 6-ում, սոցիալ կենցաղային ԱԴ-ների բաշխվածությունն ըստ բնույթի՝ նկար 12-ում:

Աղյուսակ 6.

Հ/հ	ԱԻ անվանումը	2009			2008			2007		
		ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավոր.	ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավոր.	ԱԻ քանակը	Ձոհվել է	Վիրավոր.
1	Թունավորումներ	602	6	622	638	11	803	626	16	799
2	Դիակի հայտնաբերում	18	18	*	12	12	*	19	19	*
3	Ջրահեղձում	1	1	0	0	0	0	0	0	0
4	Պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգ	2	0	0	0	0	0	2	0	0
5	Ձենք, զինամթերքի հայտնաբերում	0	0	0	0	0	0	1	0	0
6	Համաճարակներ	2	0	15	7	0	19	1	0	17

ԸՆԴԱՄԵՆԸ	625	25	637	658	23	822	649	35	816
----------	-----	----	-----	-----	----	-----	-----	----	-----



Նկար 12.

Գրանցվել է դիակի հայտնաբերման 16 դեպք, որից 11-ը՝ մայրաքաղաքում, մեկական՝ Արարատի, Արմավիրի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերում: 7 դեպքում դիակները հայտնաբերվել են բնակելի շինություններում (որից 6-ում՝ բնակարաններում, 1-ում՝ սեփական տանը), 6-ում՝ հանրապետության ջրավազաններում, 3 դեպքում՝ բաց տարածքներում:

Գրանցվել է ջրահեղծման 1 դեպք. մարտի 2-ին Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղական համայնքի հարակից լճում ջրահեղծվել է մեկ մարդ:

Գրանցվել է համաճարակների, անասնահամաճարակների բռնկման 2 դեպք.

- փետրվարի 17-ին Շիրակի մարզի Աշոցք և Հարթաշեն գյուղական համայնքներում բռնկվել է բրուցելյոզ հիվանդություն, ինչից վարակվել և պարտադիր սպանդի է ենթարկվել 268 գլուխ խոշոր եղջերավոր անասուն (145-ը՝ Հարթաշենում),
- փետրվարի 18-ին Սյունիքի մարզի Ծղուկ գյուղական համայնքում բռնկվել է բրուցելյոզ հիվանդություն, ինչից տուժել է 15 մարդ, վարակվել և պարտադիր սպանդի ենթարկվել 101 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Գրանցվել է պայթուցիկ սարքերի տեղադրման 2 ահազանգ.. (փետրվարի 16-ին և 20-ին Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոց) ահազանգերի ստոգունից պայթուցիկ սարքեր չեն հայտնաբերվել:

Թունավորումներ: 2009թ. հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է թունավորման 602 դեպք (2008թ.՝ 638, 2007թ.՝ 626): Թունավորումների հետևանքով զոհվել է 6 (2008թ.՝ 11, 2007թ.՝ 16), տուժել՝ 622 մարդ (2008թ.՝ 803, 2007թ.՝ 799):

2009թ. առաջին եռամսյակում գրանցվել է շնուլ գազից և գազի արտահոսքից թունավորման 95 դեպք (2008թ.՝ 166, 2007թ.՝ 157), ինչի հետևանքով զոհվել է 4,


տուժել՝ 110 մարդ (2008թ.՝ 331, 2007թ.՝ 189, 2006թ.՝ 117). արձանագրվել է շնու գազից թունավորման 64 դեպք, ինչի հետևանքով զոհվել է 3, տուժել՝ 78 մարդ և գազի արտահոսքից՝ 31 դեպք, ինչի հետևանքով զոհվել է 1, տուժել՝ 32 մարդ: 2 մարդ զոհվել է քիմիական նյութերի օգտագործումից:

198 մարդ տուժել է ալկոհոլի, 163՝ դեղորայքի, 69՝ սննդի, 68՝ կենցաղային և արդյունաբերական քիմիական նյութերի օգտագործումից:

2009թ. առաջին եռամսյակում թունավորումների բաշխվածությունն ըստ բնույթի բերված է աղյուսակ 7-ում, տոկոսային հարաբերությամբ նկար13-ում:

Աղյուսակ 7.


Ամիսը	Թունավորման առաջացման աղբյուրը							Ընդամենը
	Սնունդ	Ալկոհոլ	Դեղորայք	Քիմիական նյութեր	Շնու գազ	Բնական գազից	Այլ աղբյուրներ	
Հունվար	10	76	51	25	33	6	7	208
Փետրվար	37	61	52	18	15	20	1	204
Մարտ	15	61	60	27	16	5	6	190
Ընդամենը	62	198	163	70	64	31	14	602



Սկար 13.

Թունավորումների 76.6%-ը, 461 դեպք (2008թ.՝ 73.4%-ը, 468 դեպք), բաժին է ընկել մայրաքաղաքին: Ինչպես և 2008թ. բարձր ցուցանիշներ գրանցվեցին Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում: Թունավորման դեպքեր չգրանցվեցին Սյունիքի մարզում:

2009թ. առաջին եռամսյակում թունավորումների բաշխվածությունն ըստ մարզերի պատկերված է նկար 14-ում, համեմատական ցուցանիշներն ըստ մարզերի և բնույթի՝ աղյուսակ 8-ում, տուժածների բաշխվածությունն ըստ բնույթի և մարզերի՝ աղյուսակ 9-ում:



Սկար 14.

Աղյուսակ 8.

Թունավորման աղբյուրը	Արագած.	Արարատ	Արմավիր	Գեղարք.	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Երևան	ԸՆդ.
Սնունդից	6	0	5	0	1	7	4	0	2	4	33	62
Ալկոհոլից	5	1	7	0	3	4	7	0	0	0	171	198
Դեղորայքից	4	1	3	0	3	5	6	0	0	0	141	163
Քիմ. նյութերից	10	3	1	0	1	3	2	0	0	0	50	70
Շնոլ գազից	4	1	2	0	10	5	8	0	2	1	31	64
Գազի արտահոսքից	0	0	0	1	2	0	0	0	0	0	28	31
Այլ աղբյուրներից	0	0	4	0	0	2	1	0	0	0	7	14
ԸՆԴԱՍԵՆԸ	29	6	22	1	20	26	28	0	4	5	461	602

Աղյուսակ 9.

Թունավորման աղբյուրը	Արագած.	Արարատ	Արմավիր	Գեղարք.	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Երևան	ԸՆդ.
Սնունդից	6	0	5	0	3	7	5	0	2	8	33	69
Ալկոհոլից	5	1	7	0	3	4	7	0	0	0	171	198
Դեղորայքից	4	1	3	0	3	5	6	0	0	0	141	163
Քիմ. նյութերից	10	3	1	0	1	3	2	0	0	0	48	68
Շնոլ գազից	4	1	4	0	12	5	10	0	3	2	37	78
Գազի արտահոսքից	0	0	0	1	2	0	0	0	0	0	29	32
Այլ աղբյուրներից	0	0	4	0	0	2	1	0	0	0	7	14
ԸՆԴԱՍԵՆԸ	29	6	24	1	24	26	31	0	5	10	466	622